ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀՌՑ-ԳՀԾՁԲ-19/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ կարիքների համար էլեկտրահաղորդման օդային գծերի վերանորոգման և կառուցման նախագծա–նախահաշվային փաստաթղթերի մշակման, ծախսերի գնահատման ծառայության /Ծառայության/ ձեռքբերման բանակցությունների նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 19.03.2019 ժամը 14.00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ/
Ս. Դավթյանը

Անդամներ՝
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ/ Հ. Հարությունյանը
Ա. Պողոսյանը
Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ/՝ Վ. Հակոբյանը
Ռ. Սահակյանը

Հանձնաժողովի քարտուղար՝
Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀմ/ Մ. Նիկոլյանը

1. Հանձնաժողովը արձանագրեց

Ս. թ. մարտի 19-ին կայացած «ՀՀՌՑ-ԳՀԾՁԲ-19/9» ծածկագրով գնահատող հանձնաժողովի /Հանձնաժողով/ բացման նիստին արձանագրվել էր, որ Էներգացանցնախագիծ ինստիտուտ ՓԲ և Նուռտել ՍՊ ընկերությունների /Ընկերություններ/ կողմից 1 և 2 չափաբաժիններով ներկայացված գնային առաջարկները գերազանցել են նախահաշվային գները:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 40-րդ կետի 5-րդ ենթակետի բ) պարբերությամբ նիստը կասեցվել էր երկու աշխատանքային օրով և Ընկերություններին հրավիրվել է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների՝ մինչև 22.03.2019 ժամը 12.00-ը:

Սահմանված ժամկետում Ընկերությունների կողմից գները չեն նվազեցվել:

2. Հանձնաժողովը որոշեց

2.1 Ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝ ընթացակարգը հայտարարել չկայացած 1, 2 չափաբաժիններով՝ հիմք ընդունելով Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1 կետը և 3,4,5 չափաբաժիններով Նուռտել ՍՊ ընկերությունը ճանաչել առաջին տեղը զբաղեցրած մասնակից

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

2.2 Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշեց ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում Նուռտել ՍՊ ընկերության՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ /կցվում է/

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

2.3 Հաստատել չկայացած ընթացակարգի մասին հայտարարության տեքստը /կցվում է/

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

2.4 Գնահատման նիստը հրավիրել ս.թ. մարտի 28-ին, ժամը 12.00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ս. Դավթյան

անդամներ՝ _____ Հ. Հարությունյան

_____ Ա. Պողոսյան

_____ Վ. Հակոբյան

_____ Ռ. Սահակյան

քարտուղար՝ _____ Մ. Նիկոլյան